

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՉԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐԻ

**ԱՆՂԼԵՐԵՆ ԶԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԻՐԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ**

**ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն
լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Իգոր Կարապետի
Կարապետյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր **Լուսինե Արամի**

Հարույրունյան

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Անի Մելիքի
Մանուկյան**

Առաջատար կազմակերպություն՝

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ նոյեմբերի
17-ին ժամը 14:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի
Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան 52ա, Երևանի պետական
համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 208 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ.-ի հոկտեմբերի 9- ին:

Մանկավարժության 058 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

 **Ա. Փ. Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՄ ԿՅԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Անգլերենի քերականության ուսուցումը քննարկման առարկա է դարձել տարբեր մեթոդական ավանդույթների շրջանակներում: Ավանդական կամ դասական համարվող մեթոդները հիմնավորելիս, գիտնականներն առանցքային են համարել քերականական նվազագույնի ընտրության, նրա հիմնական միավորների յուրացման հիմնախնդիրները: Աստիճանաբար տեղի է ունենում տվյալ հիմնախնդրի լուծման ուղիների կոնկրետացում: Չուզահեռաբար տեղի է ունենում քերականության ուսուցման սկզբունքների վերազնահատում և վերասայում:

Դեռևս նախորդ դարի 50-60-ական թվականներին Իրանի մանկավարժներն ու մեթոդիստներն սկսեցին կիրառել անգլերենի ուսուցման գործընթացում ակտիվ մեթոդներ, որոնց կիրառումը ենթադրում է ուսուցչի և աշակերտի փոխազդեցություն, երբ աշակերտներն աստիճանաբար վերածվում են դասի ակտիվ մասնակիցների: Այս պարագայում խոսք է գնում ավելի շատ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցության մասին: Ի տարբերություն ավանդական կամ պասիվ ուսուցման մեթոդների, ակտիվ մեթոդների կիրառման դեպքում ուսուցչի ավտորիտար ոճին փոխարինելու է գալիս ժողովրդավարական ոճը:

Իրանի ավագ դպրոցում անգլերենի քերականության ուսուցմանը վերաբերող քննարկումները նոր թափ են ստացել 21-րդ դարի առաջին քառորդում: Մեթոդիստներն ու ուսուցիչները փորձում են հաղթահարել քերականական-թարգմանական, ուղիղ մեթոդները, ուսումնական գործընթացում կիրառել հաղորդակցական մոտեցման սկզբունքները:

Հետազոտության հիմնախնդիրը լուծելու համատեքստում կարևորվում են բազմալեզվության պայմաններում օտար լեզուների ուսուցմանը նվիրված աշխատանքները^{1,2}: Անգլերենի քերականության ուսուցման հիմնախնդիրը նոր բովանդակություն ստացավ կոմպետենտային մոտեցման սկզբունքների զարգացման արդյունքում, երբ մեթոդիստներն սկսեցին սահմանել

¹ Ասվաճատրյան Մ.Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա: դասագիրք բուհերի համար: -Ե.: Լույս, 1985. - 390 էջ:

² Կարապետյան Ի. Կ., Տոնոյան Լ. Հ., Մասնագիտական անգլերենի քերականության ինտերակտիվ ուսուցման առանձնահատկությունները // Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, 1-2, - Երևան, «Մանկավարժ», 2008, էջ 152-159:

քերականական կոմպետենցիա հասկացությունը որպես հաղորդակցական կոմպետենցիայի կարևոր բաղադրիչ:

Կարևորվում են հատկապես մանկավաժական քերականությանը^{3,4}, մասնագիտական անգլերենի քերականության ինտերակտիվ ուսուցման առանձնահատկություններին⁵, քերականական սխալների ուղղման մեթոդիկային⁶, համաուսուցման մոդելների ստեղծմանը⁷, քերականական կոմպետենցիայի բարձրացմանը⁸, քերականության ուսուցման վերճանաչողական, ճանաչողական ռազմավարությանը⁹, խաղային տեխնոլոգիաների կիրառմանը¹⁰, իրադրային քերականությանը¹¹,

3 Abadi N. Z., Afghari A. The Effect of Knowledge of Pedagogical Grammar on Word Guessing in Reading Comprehension among Iranian EFL Learners// Journal of Applied Linguistics and Language Research Volume 4, Issue 7, 2017, pp. 236-246:

4 Abushibab, İ. (2008). Can transformational generative grammar be used for pedagogical purposes? Retrieved from <http://search.epnet.com> accessed at 20/04/2009:

5Abbasi, M., & Karimnia, A. (2011). An analysis of grammatical errors among Iranian translation students: Insights from interlanguage theory. *European Journal of Social Sciences*, 25 (4), 525-536.

6 Aliakbari M., Nejad A. M. (2013)On the Effectiveness of Team Teaching in Promoting Learners' Grammatical Proficiency Mohammad// *Canadian Journal of Education / Revue canadienne de l'éducation* 36:3: Retrieved from <https://files.eric.ed.gov/fulltext/EJ1057969.pdf>.

7 Cook, L., & Friend, M. (1995). Co-teaching: Guidelines for creating effective practices. *Focus on Exceptional Children*, 28(3), 1-16.

8 Aliakbari M., Nejad A. M. (2013)On the Effectiveness of Team Teaching in Promoting Learners' Grammatical Proficiency Mohammad// *Canadian Journal of Education / Revue canadienne de l'éducation* 36:3: Retrieved from <https://files.eric.ed.gov/fulltext/EJ1057969.pdf>.

9 Boghian I. Metacognitive learning strategies in teaching english as a foreign language: journal of innovation in psychology, education and didactics.- vol. 20, no. 1. -2016. – pp. 53 – 62.

10 Greenall S. (1990). *Language games and activities*. Hulton educational publications Ltd, Britain. Hadfield, J. (1999). *Beginners' communication games*. Longman.

հաղորդակցական քերականությանը¹² նվիրված աշխատանքները:

Իրանի ավագ դպրոցում վերջին տարիներին առաջնային և դառնում հաղորդակցական մոտեցման սկզբունքների կիրառման հիմնախնդիրը, որը լայն հնարավորություններ է տալիս ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման համար: Ավագ դպրոցում խնդիր է դրվում նոր հիմքերի վրա դնել անգլերենի խորացված ուսուցումը:

Չտազտության արդիականությունը պայմանավորված է անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ, երբ որ տեղի է ունենում անցում քերականության ուսուցման ավանդական մեթոդներից դեպի ժամանակակից, ակտիվ և փոխներգործուն մեթոդները: Խնդիր է դրվում հաղթահարել ավանդական մեթոդների կիրառման կարծրատիպերը, առաջարկել դասագրքերի և ուսումնամեթոդական գրականության ստեղծման ավելի արդյունավետ սկզբունքներ, գնահատել և վերագնահատել քերականության ուսուցման ավանդական և ժամանակակից մոտեցումները:

ՉԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՕՔՅԵԿՏԸ անգլերենի ուսուցումն է Իրանի հանրակրթական դպրոցում:

ՉԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ անգլերեն քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգն է Իրանի ավագ դպրոցում:

ՉԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ.

Փոխներգործուն մեթոդների կիրառումն անգլերենի քերականության ուսուցման գործընթացում կարող է էապես բարելավվել, եթե ներդրվեն քերականական նյութի ընտրության նոր մոտեցումներ, կիրառվեն խոսուխոսյին, գործաբանական, փոխաբերական, սովորողների ճանաչողական, հեռանկարային պահանջմունքների վերլուծության նոր ընթացակարգեր, քերականության ուսուցումն իրականացվի պրոբլեմատիկայից առաջադրանքներով, դրվի հաղորդակցական հիմքերի վրա:

ՉԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔՆ ԵՆ կազմում ընդհանուր լեզվաբանության, կառուցվածքային, նկարագրական, փոխակերպական, իմացական, գործաբանական լեզվաբանության շրջանակներում ձևավորված հայեցակարգերը, ինչպես նաև ուղիղ,

11 Hornby A. S. The Situational Approach in Language Teaching, English language Teaching, vol. IV, 1950.- pp. 103-156.

12Ghanbari, B, Ketabi, S. (2011). Practicing a Change in an Iranian EFL Curriculum: from Ivory Tower to Reality. Iranian EFL Journal, 7 (6), 9-13.

քերականական-թարգմանական, տեսալսողական, գիտակցական, սջեթթայեդիայի, հադդրդակցական և այլ մեթոդների և մասնագիտական անգլերենի դասավանդման հիմնական սկզբունքները:

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ.

Ուսումնասիրել քերականության հիմքում ընկած փոխներգործուն մեթոդները և մշակել անգլերեն քերականության ուսուցման մեթոդական համակարգ, նախատեսված հրանի ավագ դպրոցի համար:

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. Հետազոտել փոխներգործուն մեթոդներով անգլերենի քերականության ուսուցման վերաբերող գիտամանկավարժական, լեզվաբանական գրականություն:

2. Ուսումնասիրել անգլալեզու երկրներում և հրանում քերականության ուսուցման ավանդույթները, բացահայտել դրանց զարգացման միտումները:

3. Ստեղծել անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգ, որը կարող է նպաստել անգլերենի ուսուցման արդյունավետության բարձրացմանն հրանի ավագ դպրոցում:

4. Փորձարարական ուսուցման ընթացքում ստուգել հետազոտության նախնական վարկածի ճշմարտացիությունը և հիմնավորել անգլերենի քերականության ուսուցման փոխներգործուն մեթոդիկայի կիրառման արդյունավետությունն հրանի ավագ դպրոցում:

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ.

1. Տեսական մեթոդներ.

Ա. թեմային վերաբերող գիտամանկավարժական, լեզվաբանական և մեթոդական գրականության վերլուծություն,

Բ. հադդրդակցական մոտեցման և ուսուցման փոխներգործուն մեթոդների հիմնավորման տեսությունների ընտրություն և դասակարգում,

2. Էմպիրիկ հետազոտության մեթոդներ.

Ա. փորձարարական և ստուգողական խմբերում ներգրավված աշակերտների ուսումնաճանաչողական գործընթացի դիտում,

Բ. կիրառվող մեթոդիկայով սովորող աշակերտների տված արդյունքների վերլուծություն,

Գ. աշակերտների քերականական կոմպետենցիայի մակարդակի որոշում:

Դ. հադդրդակցական-իրադրային քերականական լեզվակադապարների կիրառման ենթատեքստերի և իրադրությունների մոդելավորում,

Ե. առաջադրվող վարկածի և մշակված վարժությունների համակարգի փորձարարական ստուգում և վերլուծություն:

3. Մաթեմատիկական մեթոդներ.

Ա. աշակերտների լեզվական մակարդակների հայտորոշում,

Գ. փորձարական և ստուգողական խմբերում ներգրավված աշակերտների ցույց տված արդյունքների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

ՅԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.

Ուսուցողական նպատակներով ուսումնասիրվել և ընտրվել են ուսուցման այն փոխներգործուն մեթոդները, որոնք ընկած են իրադրային-հաղորդակցական քերականության ուսուցման սկզբունքների հիմքում: Մշակվել է Իրանի ավագ դպրոցի արդի պահանջներին համահունչ անզլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդիկա, որն ընկած է օտար լեզվի ուսուցման հաղորդակցական մեթոդիկայի հիմքում:

ՅԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ուսումնասիրվել են անզլերենի քերականության ուսուցման փոխներգործուն մեթոդները, հաշվի առնելով Իրանի կրթական իրողությունները, հստակեցվել են սովորողների քերականական և հաղորդակցական կոմպետենցիաների ձևավորման ուղիներն ու ընթացակարգերը, ինչպես նաև հաղորդակցական ուղղվածությունն ունեցող քերականական նվազագույնի ընտրության սկզբունքները և մեթոդաբանական հիմքերը:

ՅԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ատենախոսության վերջնարդյունքները կարող են կիրառվել անզլերենի քերականության ուսուցման, ինչպես նաև դասերի պլանավորման, դասընթացների նախագծման և կազմակերպման, ուսումնամեթոդական համալիրների ստեղծման գործընթացում:

ՅԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ.

Յետազոտությունը իրականացվել է հետևյալ փուլերով.

Առաջին փուլում (2017-2018) ուսումնասիրվել Իրանի ավագ դպրոցում անզլերենի ուսուցմանը վերաբերող գիտամեթոդական գրականություն: Ուսումնասիրվել են քերականության ուսուցման փոխներգործուն մեթոդները: Հիմնավորվել են փորձարարական ուսուցման անցկացման փուլերը և ընթացակարգերը:

Երկրորդ փուլը (2018-2019) իրականացվել է ստուգողական գիտափորձ: Համեմատվել են անզլալեզու երկրներում և Իրանում ստեղծված ուսումնամեթոդական համալիրները: Հստակեցվել են փորձարարական և ստուգողական խմբերը:

Երրորդ փուլում (2019-2020) վերահսկվել և ամփոփվել են

փորձարարական ուսուցման արդյունքները: Ներկայացվել են առաջարկվող մոդելի բաղադրիչները, հիմնավորվել է նշված մոդելի արդյունավետությունը:

ԱՇԽԱՏԱՆԸ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ անցել է ԵՊՀ

մանկավարժության ամբիոնում:

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆ

ապահովվում է կիրառված հիմնադրույթներով, տեսականորեն ու գործնականորեն հիմնավորվում է անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցմամբ ստեղծված մեթոդական համակարգի արդյունավետությամբ, ինչպես նաև հետազոտության օբյեկտի և առարկայի դիդակտիկական և մեթոդական առանձնահատկությունների բացահայտմամբ և հետազոտության արդյունքում ստացված տվյալների արժանահավատությամբ:

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Հետազոտության արդյունքները ներդրվել են Իրանի Հոփհանեստ Թովմասյանի և Մարի Մանուկյանի ավագ դպրոցներում:

ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆ ՆԵՐՎԱՅԱՑՎԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցումը ենթադրում է լեզվակիրներին բնորոշ իրական խոսքային իրադրությունների մոդելավորում, փոխներգործուն մեթոդների, հաղորդակցական մոտեցման սկզբունքների, հաղորդակցական-իրադրային քերականության ուսուցման սկզբունքների կիրառում համապատասխան ուսուցման պայմաններում:

2. Անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդներն ընտրելու գործընթացում պետք է հաշվի առնել ոչ միայն քերականական փոխներթափանցման (negative transfer) դրսևորումները, այլև քերականության ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների փոխներթափանցման առանձնահատկությունները:

3. Վերձանաչողական ռազմավարության կիրառման կարողությունը կարելի է զարգացնել հետևողական փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունքում, քանի որ դերային խաղերը, բանավեճը, դեպքերի նկարագրությունը, ինտերակտիվ նախագծերի կիրառումը ենթադրում է անհրաժեշտ հաղորդակցական ռեֆլեքսիվ կարողությունների առկայություն:

4. Անգլերեն քերականական նվազագույնն Իրանի ավագ դպրոցում անհրաժեշտ է ընտրել ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից: Դա ենթադրում է հաշվի նստել թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի մենթալիտետի հետ: Միայն քերականության ուսուցման դեղուկտիվ և ինդուկտիվ եղանակների համադրումը կարող է տալ ցանկալի արդյունք:

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ.

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից, 3 գծապատկերից, 10 տրամագրից և հավելվածից: Աշխատանքի ծավալը կազմում է համակարգչային 125 էջ:

Ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված են հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են վեց հոդվածում (տես՝ ատենախոսության սեղմագրի վերջում ներկայացված դրանց անվանացանկը):

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության՝ **«Անգլերեն քերականության ուսուցման առանձնահատկությունները Իրանի հանրակրթական դպրոցում»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **«Անգլերենի քերականության ուսուցման փոխներգործուն մեթոդներն Իրանի ավագ դպրոցում»** ենթագլխում ներկայացվում են քերականության ուսուցման փոխներգործուն մեթոդները, սահմանվում է **«ինտերակտիվ»** եզրույթը, հաղորդակցական քերականության հայեցակարգը, մանկավարժական քերականությունը, կառուցողական ուսուցման տեսությունները, քերականության ուսուցման փոխներգործուն մոդելը, բացահայտվում են փոխներգործուն մեթոդների խոսութային հիմքերը, ֆասիլիտացիայի կամ աջակցման տեխնոլոգիան:

Երկրորդ **«Անգլերեն քերականության ուսուցման հաղորդակցական սկզբունքները»** ենթագլխում վերլուծվում են Իրանի ավագ դպրոցում անգլերեն քերականության ուսուցման սկզբունքները և մեթոդները, անգլերեն քերականական նվազագույնի ընտրության հիմնախնդիրը, համեմատվում է մանկավարժական քերականությունը լեզվաբանական քերականության հետ: Վերլուծվում են քերականական նվազագույնի և բառապաշարի ընտրության հիմնախնդիրը հաղորդակցական մոտեցման տեսանկյունից: Ներկայացվում են պարսկերենի ուսուցման ավանդույթները:

Երրորդ **«Անգլերենի քերականության ինքնաքերական ուսուցման**

Նախադրյալներն Իրանի ավագ դպրոցում» ենթագլխում ընդհանուր բնութագրերով ներկայացվում է ինքնաբերական, բնույթով՝ հաղորդակցական, բովանդակությամբ՝ ներակա կամ իմպլիցիտ, յուրացման եղանակներով՝ փոխներգործուն քերականության ուսուցման եղանակը, որը գործառական մակարդակում բավարարում է հաղորդակցական-ճանաչողական մոտեցման պահանջները:

Ներկայացվում են այն փոխներգործուն մեթոդները, որոնք արդյունավետ են որոշակի դասանյութի շրջանակներում ստեղծված քերականական առաջադրանքները կատարելիս:

Եզրահանգում է արվում այն մասին, որ փոխներգործուն մեթոդներով քերականության ուսուցման մշակույթը ձևավորվում է դանդաղ: Դրանց ներդրման համար անհրաժեշտ է ժամանակ, օտար լեզուների ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համակարգում շրջադարձային բարեփոխումներ, նոր ուսումնամեթոդական համալիրների ստեղծում և ներդրում, ուսուցման ժամանակակից ռազմավարությունների կիրառում:

Երկրորդ «Անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մոդելն Իրանի ավագ դպրոցում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին **«Չաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման ուղիներն անգլերենի քերականության ուսուցման գործընթացում»** ենթագլխում ներկայացվում է կոմպետենտային մոտեցումը, նրա կիրառման պատմությունն Իրանի կրթական համակարգում, վերլուծվում են հաղորդակցական մոտեցման տեսանկյունից Իրանի միջնակարգ դպրոցի դասագրքերը:

Նշվում է, որ անգլերենի քերականության ուսուցումը պահանջում է հաշվի առնել քերականության ուսուցման պատմությունը, մեթոդները, ուսուցման անձնակողմորոշիչ, փոխներգործուն տեխնոլոգիաները և մեթոդները:

Սահմանվում է «հանրալեզվաբանական կոմպետենցիա», «լեզվական», «քերականական կոմպետենցիա» հասկացությունները:

Երկրորդ «Անգլերենի քերականության ուսուցման վերճանաչողական և ճանաչողական ռազմավարություններն ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման համատեքստում» ենթագլխում ներկայացվում են անգլերենի քերականության ուսուցման վերճանաչողական և ճանաչողական ռազմավարություններն ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման համատեքստում: Բացահայտվում են նշված և այլ ռազմավարությունների բովանդակային և գործառական բնութագրերը, դրանց

տեսական և մեթոդաբանական հիմքերը, փոխներգործուն մեթոդների կիրառման օրինակներ ըստ ռազմավարությունների կիրառման փուլերի և ընթացակարգերի:

Երրորդ **«Անգլերենի քերականության համառուտւցման մոդելներն Իրանի ավագ դպրոցում»** ենթազխում ներկայացվում են համառուտւցման մոդելների կիրառման հնարավորությունները Իրանի ավագ դպրոցում, հաշվի առնելով համառուտւցման մոդելների տեսական և մեթոդաբանական հիմքերը, համագործակցային մանկավարժության և հաղորդակցական մոտեցման սկզբունքները, Իրանում անգլերենի ուսուցման գերիշխող մոտեցումները, սովորողների և դասավանդողների մենթալիտետի առանձնահատկությունները, ընդհանուր առմամբ՝ Իրանի կրթական իրողությունները:

Ներկայացվում են համառուտւցման մոդելների կիրառման նպատակահարմարության տեսանկյունից Իրանի և Հայաստանի մեթոդական հանրությունների ընդհանրությունները և տարբերությունները, ինչպես նաև ուսումնական և արտաուսումնական այլ գործոններ:

Երրորդ **«Անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարարական ստուգումը»** բաղկացած է երեք ենթազխից: Առաջին **«Անգլերեն քերականության փոխներգործուն ուսուցման նախադրյալները խաղերի միջոցով ժամանակակից դպրոցում»** ենթազուխը նվիրված է խաղերի միջոցով անգլերեն քերականության ուսուցմանը: Սահմանվում է «խաղ» հասկացությունը, խաղի տեսակները, խաղային տեխնոլոգիաները, ներկայացվում են այն առաջադրանքները, որոնք ստեղծվել են այս կամ այն խաղի ներդրման շրջանակներում: Մեծ տեղ է հատկացվում համացանցային, համակարգչային առցանց խաղերի ներկայացմանը, որոնք հիմքում ընկած են համագործակցային խաղերը:

Երկրորդ **«Հաղորդակցական-ճանաչողական սկզբունքներով անգլերեն քերականություն ուսուցանելու նախադրյալներն Իրանի ավագ դպրոցում»** ենթազխում վերլուծության են ենթարկվում հաղորդակցական մոտեցման մեթոդաբանական հիմքերը, բացահայտվում են հաղորդակցական մոտեցման առանձնահատկությունները: Նշվում է, որ սովորողները քերականությունը պետք է յուրացնեն ոչ թե տեքստի, այլ խոսույթի մակարդակում:

Երրորդ **«Անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության գիտափորձարարական հիմնավորումը»** ենթազխում ներկայացվում է անգլերենի քերականության

փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգը:

Ուսումնասիրվել են Իրանի ավագ դպրոցի համար նախատեսված դասագրքերը, ուսումնական ծրագրերը, ուսումնական պլանները: Շրջանառվող դասագրքերին ի լրումն առաջարկվել են փորձարարական խմբում կիրառելու համար բնագրային տեքստեր և վարժություններ:

Փորձարարական ուսուցման երկրորդ փուլում ստուգվել է ուսուցման փոխներգործուն մեթոդների անգլերենի քերականության ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետությունը: Փորձարարական ուսուցման արձանագրող փուլում իրականացվել է ստացված արդյունքների մշակում և ամփոփում:

Փորձարարական ուսուցման ընթացքում փորձ է արվել համապատասխանեցնել քերականական կյուղը ուսուցման փոխներգործուն մեթոդներին: Ընդհանուր առմամբ կիրառվել է քերականության ուսուցման կատակներ, անեկդոտներ, հետաքրքիր պատմվածքներ, ասույթներ և ասացվածքներ, խոսույթաստեղծ բնագրային տեքստեր, այնպիսի տեքստեր, որոնք պարունակում են անգլերեն խոսակցական բառաշերտին բնորոշ հաղորդակցական լեզվակաղապարներ:

Փորձարարական ուսուցումն իրականացվել է Իրանի Հոփհանես Թովմասյանի և Մարի Մանուկյանի անվան ավագ դպրոցներում: Փորձարարական ուսուցման մասնակիցների թիվը՝ ավագ դպրոցների 12-րդ դասարաններում 32, 33 սովորող: Փորձարարական ուսուցման նպատակն է հիմնավորել անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Հարցման ենթակա աշակերտների 10 %-ը կանոնները սովորում է պարսկերեն, 25 %-ը՝ անգլերեն և 65%-ը՝ և՛ անգլերեն, և՛ պարսկերեն: Ակնհայտ է, որ այստեղ ուսուցման փոխներգործուն մեթոդներով անգլերենի քերականության մասին խոսք չի կարող լինել:

Հարցման ենթակա աշակերտների 57 %-ը սովորում է անգլերենի քերականության կանոնները, հետո դրանք ամրապնդում են համապատասխան օրինակներով, 12 %-ը տիպական օրինակների հիման վրա դուրս է բերում կանոնը, 31%-ը համադրում է երկու եղանակը: Ակնհայտ է, որ աշակերտներն անգլերենի քերականությունը հիմնականում ուսումնասիրում են դեդուկտիվ եղանակով, որը սահմանափակում է ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման հնարավորությունները:

Հարցման ենթակա աշակերտների 27 %-ը քերականական կանոնները յուրացնում է խմբային քննարկումների միջոցով, 36 %-ը՝ թեստեր լուծելու

միջոցով, 37 %-ը՝ ուսուցչի բացատրելու արդյունքում:

Հարցման ենթակա աշակերտների 57 %-ը անզվերենի քերականությունը սովորում է մայրենիի հետ համեմատելով, 31 %-ը՝ օրինակները պարտադիր թարգմանելով, 22%-ը՝ տեքստի բովանդակությունը հասկանալու ընթացքում: Ինչպես և նախորդ հարցերի պատասխանները վերլուծելիս, կարելի է հանգել այն եզրահանգման, որ անզվերենի քերականությունը հարցման ենթակա աշակերտների շրջանում փոխներգործուն մեթոդներով չեն ուսուցանվում:

Հարցման ենթակա աշակերտների 16 %-ը անզվերենի քերականությունն ուսումնասիրում է դերային խաղեր խաղալով, 9 %-ը՝ գծագրական դասակարգիչներ կիրառելով, 75 %-ը՝ գրավոր թեստեր լուծելով:

Հարցման ենթակա աշակերտների 81 %-ը գտնում է, որ իրենց քերականական սխալներն ուսուցիչն ուղղում է ամիջապես, 9 %-ը՝ աշակերտներն ուղղում են աշակերտների սխալները, 10 %-ը՝ ուսուցիչն է ուղղում անուղղակի կամ դասի վերջում : Հարցման պատասխանները հաստատում են այն միտքը, որ անզվերենի ուսուցիչները նշված դպրոցներում գրեթե չեն կիրառում հաղորդակցական մոտեցման սկզբունքները, ինչպես նաև ուսուցման փոխներգործուն մեթոդները:

Հարցման ենթակա աշակերտների 58 %-ը գտնում է, որ քերականական սխալների համար ուսուցիչն իջեցնում է գնահատականը, 23 %-ը՝ ուսուցիչը պարզապես դիտողություն է անում, 19 %-ը՝ ուսուցիչը հիմնականում փորձում է բացատրել սխալի պատճառը: Ակնհայտ է, որ սխալվելու համար միանգամից թվանշաններով պատժելու պրակտիկան հակասում է ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման մեթոդաբանությունը:

Հարցման ենթակա աշակերտների 9 %-ը գտնում է, որ անզվերեն քերականությունն ուսումնասիրում են միայն անզվաբեզու երկրում լույս տեսած դասագրքերով, 79 %-ը՝ միայն Իրանում լույս տեսած դասագրքերով, 12%-ը՝ բրիտանական և իրանական դասագրքերով: Ստացած տվյալները հաստատում են այն միտքը, որ աշակերտները չեն օգտվում հիմնականում ուսուցման փոխներգործուն մեթոդներով աշխատելու համար նախատեսված դասագրքերից:

Հարցման ենթակա աշակերտների 64 %-ը գտնում է, որ անզվերեն քերականությունն ուսումնասիրում են ակադեմիական տեքստերի շուրջ աշխատանքի ընթացքում, 16%-ը՝ բնագրերի շուրջ աշխատանքի ընթացքում, 18 %-ը՝ խոսակցական լեզվից վերցրած երկխոսությունների միջոցով: Աշակերտներին նախօրոք բացատրվել էր ակադեմիական և բնագրային

տեքստերի տարբերությունները: Ակնհայտ է, որ նրանք հիմնականում չեն ընթերցում բնագրեր, և այդ հանգամանքը խոչընդոտ է հանդիսանում հաղորդակցական, իրադրային քերականության ուսուցման փոխներգործուն մեթոդներով ուսումնասիրությանը:

Հարցաթերթիկի արդյունքներն ամփոփելուց հետո իրականացվել է փորձարարական ուսուցում, որի ընթացքում խնդիր է դրվել փորձարարական խմբում փորձարկել մշակված անգլերենի փոխներգործուն մեթոդներով ուսուցման մեթոդական համակարգը:

Փորձարարական ուսուցման ընթացքում կիրառվել են ինչպես ընկալողական, այնպես էլ արտադրողական վարժություններ: Մեթոդական նյութի կիրառումն իրականացվել է ըստ վարժությունների տեսակների: Ստուգողական խմբում օգտագործվել են Իրանի ավագ դպրոցի համար նախատեսված անգլերենի դասագրքեր:

Փորձարարական ուսուցման ավարտական փուլում իրականացվել է թեստավորում, որի միջոցով ստուգվել են աշակերտների անգլերենի քերականության յուրացման մակարդակը: Թեստավորման համար առաջարկվել է աշակերտներին 20 հարցից բաղկացած թեստ: Կատարման տևողությունը 45 րոպե: Հետփորձարարական ստուգողական աշխատանքը բաղկացած էր վեց առաջադրանքից:

Ինչպես ցույց են տալիս առաջադրանքների կատարման արդյունքները, առաջարկվող մեթոդական համակարգն արդյունավետ է, քանի որ փորձարարական խմբում ներգրավված աշակերտներն հասել են բարձր ցուցանիշների:

Եզրակացություն է արվում այն մասին, որ անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգը ճիշտ և ժամանակին կիրառելու դեպքում կարելի է հասնել ավելի լավ արդյունքների: Ասվածի վառ ապացույցն է փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների ամփոփիչ աղյուսակը.

Քերականական նյութի հետ աշխատելի կարողություններ	Փորձարարական խումբ		Ստուգողական խումբ	
	Սովորողների թիվը – 33		Սովորողների թիվը – 32	
	Մինչև փորձը	Փորձից հետո	Մինչ և փորձը	Փորձից հետո

1. անծանոթ քերականական երևույթները ճանաչելու	15	18	15	17
2. քերականական երևույթները և կառույցների իմաստը հասկանալու	13	16	12	14
3. տվյալ քերականական կառույցի հիման վրա լավ ձևակերպված կապակցություններ և նախադասություններ վերարտադրելու,	14	17	13	15
4. տվյալ քերականական կառույցի հիման վրա միտքը արտահայտելու	14	18	14	16
5. քերականական երևույթներն գրավոր խոսքում կիրառելու	14	18	14	16
6. քերականական երևույթներ մենախոսության մեջ կիրառելու	13	17	13	15
7. քերականական երևույթներն երկխոսության մեջ կիրառելու	12	17	11	15
8. վերճանաչողական ռազմավարության կիրառման	12	16	12	14
9. ճանաչողական ռազմավարության կիրառման	13	17	12	15
10. քերականական	14	18	13	16

Երևույթների տարբեր խոսքային իրադրություններում գործածելու				
---	--	--	--	--

Փորձարարական եվ ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների համեմատական վերլուծությունը հաստատում է անգլերենի քերականության փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետությունը, քանի որ փորձարարական խմբի ցույց տված արդյունքներն ավելի բարձր են:

ԵՆՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հիմնվելով հաղորդակցման, երկխոսության, ուսանողների ձեռք բերած գիտելիքների և իմացական փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, ուսուցման/ուսումնառության գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, մտագործունեության շարժընթացի ապահովման և ռեֆլեքսիայի վրա, փոխներգործուն մեթոդներն արդյունավետ են վերճանաչողական, ճանաչողական, հուզազգայական և այլ ռազմավարությունների կիրառման պարագայում քերականության ուսուցման պլանավորման, մշտադիտարկման և գնահատման տարբեր փուլերում:

2. Արտացոլելով ուսուցման փոխներգործուն մեթոդների բովանդակային և գործառական բնութագրերը, համաուսուցման մոդելները գործնականում քերականական նյութի յուրացման համար բարենպաստ հող են ստեղծում, հատկապես քերականական սխալների վերլուծության, դրանց բացահայտման, դրական հուզական մթնոլորտում շտկելու տեսանկյունից:

3. Ակնհայտ է, որ ուսուցչի պլանավորման, հասկանալու և մշտադիտարկելու, վերահսկելու, գնահատելու կարողությունները փոխանցվում են սովորողներին:

4. Ավանդաբար դպրոցում զարգացնում են ճանաչողական ռազմավարության կիրառման կարողությունը: Սակայն առաջարկվող մեթոդիկայում մեծ տեղ է հատկացվում սովորողների ռեֆլեքսիվ ունակությունների զարգացման վրա, երբ նրանք գիտակցում են քերականական նյութի հետ աշխատելու նպատակը, մեթոդները, և ձևերը: Դրանով է պայմանավորված փորձարարական խմբի ցույց տված արդյունքները:

5. Անգլերենի քերականության ուսուցման փոխներգործուն մեթոդները կիրառելու կարևոր պայման է ընթացիկ և ավարտական, ուսուցման և գնահատման թեստերի և թեստային առաջադրանքների համակարգված

ներմուծումը:

6. Առաջին և թիրախային լեզուների քերականական երևույթների համեմատությունը կարող է լինել արդյունավետ, եթե վերլուծությունը իրականացվում է անգլերեն լեզվով:

7. Անգլերենի քերականության ուսուցման գործընթացը ենթադրում է ավանդական մեթոդների և ձևերի շարունակական կատարելագործում, քերականական-թարգմանական մեթոդի շրջանակներում ձևավորված կարծրատիպերի և մոտեցումների հաղթահարում, նոր, հաղորդակցական մոտեցման սկզբունքներով քերականության ուսուցման հայեցակարգի ձևավորում, որն ընկած է քերականության ուսուցման կոմպետենտային մոտեցման հիմքում:

8. Կոմպետենտային մոտեցման սկզբունքները կարող են կիրառվել արդյունավետորեն, եթե քերականությունը ուսուցանվում է փոխներգործուն մեթոդներով: Փոխներգործուն մեթոդներով քերականության ուսուցումը ենթադրում է ձևավորել և զարգացնել սովորողների հաղորդակցական կոմպետենցիան ուսուցման բոլոր փուլերում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Չարգարյան Ա. Մ. Անգլերենի քերականության համաուսուցման մոդելներն Իրանի ավագ դպրոցում//, «Մանկավարժական միտք», 2018, թիվ 1-2 (68-69), «Չանգակ» հրատարակչություն», էջ154-158:

2. Չարգարյան Ա. Մ. Անգլերենի քերականության ինքնաքերական ուսուցման -նախադրյալներն Իրանի ավագ դպրոցում: ԲԱՆԲԵՐ Երեվանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի//2(43), 2018, ԵՐԵՎԱՆԻ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի «լինգվա» հրատարակչություն էջ 167-174:

3. Չարգարյան Ա.Մ. Անգլերենի քերականության ուսուցման փոխներգործուն մեթոդներն Իրանի ավագ դպրոցում, «Մանկավարժական միտք», 2018, թիվ 3, «Չանգակ» հրատարակչություն», էջ 74-78: Համահեղինակ՝ Ի. Կ. Կարապետյան

4. Չարգարյան Ա. Մ. Անգլերեն քերականության փոխներգործուն ուսուցման նախադրյալները խաղերի միջոցով ժամանակակից դպրոցում, «Մանկավարժական միտք», 2019, թիվ 3-4, «Չանգակ» հրատարակչություն», էջ

60-67: Համահեղինակ՝ Ի. Կ. Կարապետյան:

5. Չարգարյան Ա. Մ. Հաղորդակցական-ճանաչողական սկզբունքներով անգլերեն քերականություն ուսուցանելու նախադրյալները Իրանի ավագ դպրոցում, «Մանկավարժական միտք», Մխիթար Գոշ Գիտական և ուսումնամեթոդական հոդվածներ. – 2018. էջ 114:

6. Չարգարյան Ա. Մ., Անգլերենի քերականության ուսուցման վերճանաչողական և ճանաչողական ռազմավորություններն ուսուցման փոփոխությունները մեթոդների կիրառման համատեքստում//«Մանկավարժական միտք», 2021, թիվ 3-4, (76-77), «Չանգակ» հրատարակչություն», էջ 73-81: համահեղինակ՝ Ի. Կ. Կարապետյան:

МЕТОДИЧЕСКАЯ СИСТЕМА ИНТЕРАКТИВНОГО ОБУЧЕНИЯ ГРАММАТИКЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА В СТАРШЕЙ ШКОЛЕ ИРАНА

Актуальность исследования определяется необходимостью создания методической системы интерактивного обучения грамматике английского языка, когда происходит переход от традиционных методов обучения грамматике к современным активным и интерактивным методам. Проблема состоит в преодолении стереотипов использования традиционных методов, предложении более эффективных принципов создания учебников и учебной литературы, оценке и переоценке традиционных и современных подходов к обучению грамматике.

Целью исследования:

Изучить интерактивные методы, лежащие в основе обучения грамматике и разработать методическую систему преподавания английской грамматики в средней школе Ирана.

Объектом исследования является преподавание английского языка в общеобразовательной школе Ирана.

Предметом исследования является методическая система интерактивного обучения грамматике английского языка в иранской средней школе. В соответствии с целью, объектом и предметом исследования были предложены следующие задачи.

1. Исследовать научно-педагогическую и лингвистическую литературу, посвященную обучению грамматике английского языка интерактивными методами.

2. Изучить традиции преподавания грамматики в англоязычных странах и Иране, выявить тенденции их развития.

3. Создать методическую систему интерактивного обучения английской грамматике, которая может способствовать повышению эффективности преподавания английского языка в средней школе Ирана.

4. В ходе экспериментального обучения проверить истинность исходной гипотезы исследования и обосновать эффективность использования интерактивной методики обучения английской грамматике в иранской средней школе.

Научная новизна исследования:

Для образовательных целей изучены и отобраны интерактивные методы обучения, лежащие в основе принципов когнитивно-коммуникативной грамматики. В соответствии с современными требованиями иранской старшей школы разработана интерактивная методика обучения грамматике английского языка, которая является основой коммуникативной методики обучения иностранному языку.

Теоретическая значимость исследования:

Изучены интерактивные методы обучения английской грамматике с учетом образовательных реалий Ирана, уточнены способы и процедуры формирования у учащихся грамматических и коммуникативных компетенций, а также принципы и методические основы выбора коммуникативно-ориентированного грамматического минимума.

Практическая значимость исследования:

Основные выводы и результаты диссертации могут быть применены в процессе обучения английской грамматике, а также в процессе планирования уроков, проектирования и организации курсов, создания учебно-методических комплексов. **Структура и объем работы:**

Диссертация объемом 125 страниц состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений.

ZARGARYAN ANAHIT MARGAR

METHODOLOGICAL SYSTEM OF INTERACTIVE TEACHING OF ENGLISH GRAMMAR IN IRAN'S HIGH SCHOOL

Thesis for degree of candidate for pedagogical sciences, specialty 13.00.02 – Teaching and Learning Methodology (English Language). The defense of thesis will be held at 14:00 on the 17-th of November 2023, at the session of the Special Board 058 SCC (Supreme Certifying Committee) to award scientific degree at Yerevan State University: 0025 , Yerevan, Abovyan 52a.

SUMMARY

The relevance of the study is determined by the need to create a methodological system of interactive teaching of English grammar, in terms of transition of traditional methods of teaching grammar to modern active and interactive methods. The problem is to overcome the stereotypes of using traditional methods, to propose more effective principles for creating textbooks and educational literature, to evaluate and re-evaluate traditional and modern approaches to teaching grammar.

The purpose of the study:

To study the interactive methods underlying the teaching of grammar and develop a methodical system for teaching English grammar in Iran's secondary school.

The object of the research is the teaching of English in the secondary school of Iran.

The subject of the research is the methodical system of interactive teaching of English grammar in the Iranian secondary school. In accordance with the purpose, object and subject of the study, the following tasks were proposed.

1. To research scientific, pedagogical and linguistic literature devoted to teaching English grammar by interactive methods.
2. To study the traditions of teaching grammar in English-speaking countries and Iran, to identify trends in their development.
3. To create a methodical system of interactive teaching of English grammar, which can improve the effectiveness of teaching English in Iranian secondary schools.

4. In the course of experimental learning, check the validity of the original research hypothesis and substantiate the effectiveness of using the interactive methodology for teaching English grammar in Iranian secondary schools.

Scientific novelty of the research:

For educational purposes, interactive teaching methods that underlie the principles of cognitive-communicative grammar have been studied and selected. In accordance with the modern requirements of the Iranian high school, an interactive method of teaching English grammar has been developed, which is the basis of a communicative method of teaching a foreign language.

Theoretical significance of the study:

Interactive methods of teaching English grammar are studied, taking into account the educational realities of Iran, the methods and procedures for the formation of grammatical and communicative competencies in students, as well as the principles and methodological foundations for choosing a communicatively-oriented grammatical minimum, are clarified.

Practical significance of the study:

The main conclusions and results of the dissertation can be applied in the process of teaching English grammar, as well as in the process of planning lessons, designing and organizing courses, creating educational and methodological complexes. Structure and scope of work:

The dissertation of 125 pages consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references and appendices.

